Սըր Արթուր Կոնան Դոյլ

ԲՈՍՈՐԱԳՈՒՅՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

BAKER
STREET

A Study in Scarlet

Sir Arthur Conan Doyle

Բոսորագույն վկայությունը

Սըր Արթուր Կոնան Դոյլ

Թարգմանիչ՝ Լիլիթ Մկրտչյան

Երևան, 2026 թ.

NovusLiber

Yerevan, 2026

ՀՏԴ 821.111-312.4 Դոյլ
ԳՄԴ 84(4Մբ)-445.7
Դ 739

Armenian translation © 2026 Lilit Mkrtchyan

Հայերեն թարգմանություն © 2026 Լիլիթ Մկրտչյան

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սույն գրքի որևէ մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական համակարգերում կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցներով (էլեկտրոնային, մեխանիկական, ձայնագրման, լուսապատճենահանման և այլն) առանց հրատարակչի գրավոր թույլտվության, բացառությամբ տեղեկատվական նպատակներով արվող կարճ մեջբերումների՝ հեղինակի կամ թարգմանչի անվան հստակ նշմամբ:

ISBN 978-9939-9383-3-2 (Էլ. հրատ.)

ISBN 978-9939-9383-2-5 (տպագիր)

ISBN 978-9939-9383-2-5

9 789939 938325

A Study in Scarlet

Sir Arthur Conan Doyle

Բոսորագույն վկայությունը

Սըր Արթուր Կոնան Դոյլ

«Բոսորագույն վկայությունը» Արթուր Կոնան Դոյլի Շերլոկ Հոլմսի մասին պատմող շարքի առաջին վեպն է, որտեղ ընթերցողը ծանոթանում է ոչ միայն խորհրդանշական դետեկտիվի կերպարին, այլև նրա մեթոդին՝ դիտարկման, տրամաբանական վերլուծության և դեդուկցիայի գիտությանը:

Վեպը ներկայացվում է դոկտոր Ջոն Վոթսոնի տեսանկյունից և պատմում է Լոնդոնում կատարված մի խորհրդավոր սպանության մասին, որի հետաքննությունը բացահայտում է մարդկային կրքերի, վրեժի և անցյալի ստվերների բարդ փոխկապակցվածությունը:

Սույն հրատարակությունը ներկայացնում է ամբողջական հայերեն թարգմանություն՝ հավատարիմ բնագրի ոճին և պատմական միջավայրին, պահպանելով դասական դետեկտիվ գրականությանը բնորոշ լարվածությունն ու մտավոր խաղը: Գիրքը նախատեսված է դասական գրականության, դետեկտիվ ժանրի և տրամաբանական մտածողության պատմությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

Սրանով **Novus Liber** հրատարակչությունը սկսում է Շերլոկ Հոլմսի և դոկտոր Վոթսոնի մասին վեպերի և պատմվածքների հայերեն թարգմանությունների հրատարակումը: Շարքի նպատակն է ընդգրկել Արթուր Կոնան Դոյլի այս կերպարներին նվիրված բոլոր ստեղծագործությունները:

Բովանդակություն

Մաս I. Բոսորագույն վկայությունը 10
Գլուխ 1. Պարոն Շերլոկ Հոլմսը 10
Գլուխ 2. Դեդուկցիայի գիտությունը 24
Գլուխ 3. Լորիսթոն Գարդենսի առեղծվածը 40
Գլուխ 4. Ինչ պիտի պատմեր Ջոն Ռանսը 59
Գլուխ 5. Մեր գովազդով եկած այցելուն 71
Գլուխ 6. Թոբայաս Գրեգսոնի տաղանդները 82
Գլուխ 7. Լույսը մթության մեջ 97
Մաս II. Սրբերի երկիրը 111
Գլուխ 1. Մեծ Աղային հարթավայրը 111
Գլուխ 2. Յուտայի ծաղիկը 127
Գլուխ 3. Ջոն Ֆերիերի զրույցը Մարգարեի հետ 139
Գլուխ 4. Փրկության փախուստը 147
Գլուխ 5. Վրիժառու հրեշտակները 162
Գլուխ 6. Դոկտոր Ջոն Վոթսոնի հիշողությունների շարունակությունը 176
Գլուխ 7. Եզրակացությունը 193
Ծանոթագրություններ 203

Մաս I. Բոսորագույն վկայությունը

Գլուխ 1. Պարոն Շերլոկ Հոլմսը

Վերատպված է՝
Թագավորական բանակի բժշկական կորաբաժնի նախկին դաշտային վիրաբույժ Ջոն Հ. Վոթսոնի հիշողություններից

1878 թվականին ավարտեցի Լոնդոնի համալսարանի բժշկական բաժինը և ստացա բժշկագիտության դոկտորի կոչում: Այնուհետև տեղափոխվեցի Նեթլի, որտեղ պետք է ևս մեկ դասընթաց ավարտեի դաշտային վիրաբուժությունից՝ մինչև բանակում ծառայության անցնելը: Այնտեղ ուսումս ավարտելուց հետո նշանակվեցի Նորթամբերլենդյան հրաձիգների հինգերորդ զորագնդում՝ որպես վիրաբույժի օգնական:

Այդ ժամանակ մեր զորագունդը տեղակայված էր Հնդկաստանում, և մինչ ես՝ մայրցամաքներ ու օվկիանոսներ հատելով, ուղևորվում էի դեպի ծառայությանս վայրը, սկսվեց Աֆղանական երկրորդ պատերազմը[1]:

Բոմբեյում նավից իջնելուն պես իմացա, որ իմ զորագունդը լեռնանցքներով առաջ էր շարժվել երկրի խորքը և արդեն դիրքավորված էր թշնամու տարածքի խոր թիկունքում: Բազմաթիվ այլ սպաների հետ, ովքեր հայտնվել էին ճիշտ ինձ նման իրավիճակում, ես նույնպես ճանապարհ ընկա դեպի իմ

նշանակետը և բարեհաջող հասա Քանդահար, որտեղ գտա իմ զորագունդը և անմիջապես ստանձնեցի պարտականու-թյուններս:

Այդ ռազմական արշավը շատերին բերեց փառք, պարգևներ ու ծառայողական առաջընթաց, սակայն ինձ համար ճակատագիրը միայն դժբախտություններ էր նախատեսել այդ ճանապարհին: Ինձ իմ բրիգադից տեղափոխեցին Բերքշայրի զորագունդ, որտեղ մասնակցեցի Մայվանդի հանրահայտ ճակատամարտին[2]:

Հենց առաջին իսկ մարտում ռուսիս փամփուշտ ստացա, որը փշրեց անրակս ու վնասեց ենթանրակային երակը: Հենց այնտեղ էլ արյունարբու ղազիների[3] ձեռքով կկնքեի մահկանացուս, եթե չլիներ իմ քաջարի բուժակ Մյուրեյի անձնվեր հավատարմությունը: Նա ինձ փալանի պես կապեց ձիերից մեկի թամբին ու հասցրեց բրիտանական զորքերի գիծը:

Ցավից ու երկարատև զրկանքներից լիովին ուժասպառ, բազմաթիվ ծանր վիրավորների երկար թափորի հետ միասին ինձ էլ տեղափոխեցին Փեշավարի գլխավոր զինվորական հոսպիտալը: Այստեղ ուժերս աստիճանաբար վերականգնվեցին, և արդեն այնքան էի կազդուրվել, որ կարողանում էի շրջել հիվանդանոցի միջանցքներում, անգամ երբեմն արևկող նստել պատշգամբում, երբ ինձ անսպասելիորեն տապալեց որովայնային տիֆը՝[4] մեր հնդկական տիրույթների անիծյալ պատուհասը:

Ամիսներ շարունակ կյանքս անհույս էր, և երբ վերջապես ուշքի եկա ու սկսեցի ապաքինվել, այնքան թույլ ու հյուծված էի, որ բժշկական հանձնաժողովը որոշեց. առանց մի օր իսկ

հապաղելու ինձ հետ ուղարկել Անգլիա՝ բուժվելու: Եվ այդպես՝ «Օրոնտես» ռազմանավով ինձ հետ ուղարկեցին տուն:

Մեկ ամիս անց ափ իջա Պորտսմութի նավամատույցում՝ առողջությունս անդառնալիորեն խանգարված, բայց կառավարության հայրական հոգատարությամբ, ապաքինման համար տրամադրված ինը ամսվա հատուցվող զինվորական արձակուրդով:

Անգլիայում ո՛չ ազգական ունեի, ո՛չ էլ բարեկամ, ուստի ազատ էի օդի պես կամ առնվազն այնքան ազատ, որքան տղամարդուն թույլ կտար օրական տասնմեկ շիլլինգ ու վեց պենս[5] նպաստը: Այդ պայմաններում, բնականաբար, ձգվեցի դեպի Լոնդոն՝ այդ մեծ կոյափոսը, ուր անդիմադրելիորեն կուտակվում են կայսրության բոլոր պարապ-սարապներն ու գործազուրկները:

Այնտեղ որոշ ժամանակ բնակվեցի Ստրենդում[6] գտնվող մի մասնավոր հյուրանոցում՝ անհարմարավետ ու անիմաստ կյանք վարելով և ունեցածս խղճուկ միջոցները ծախսելով շատ ավելի արագ, քան կուզենայի: Շատ շուտով ֆինանսական վիճակս այնքան մտահոգիչ դարձավ, որ սկսեցի գիտակցել, որ կամ պետք է հեռանամ մայրաքաղաքից ու մեկուսի կյանք վարեմ որևէ գյուղում, կամ պետք է արմատապես փոխեմ ապրելակերպիս ոճը: Ընտրելով երկրորդ տարբերակը՝ որոշեցի նախ դուրս գալ հյուրանոցից և բնակության համար մի ավելի համեստ ու էժան տեղ գտնել:

Հենց նույն օրը, երբ եզրահանգել էի այդ որոշմանը, կանգնած էի «Քրայթիրիոն» ռեստորանի բարում, երբ ինչ-որ մեկը թեթևակի

հարվածեց ուսիս, ու շրջվելով՝ ճանաչեցի երիտասարդ Սթեմֆորդին, որը մի ժամանակ Բարդի հիվանդանոցում[7] աշխատել էր իմ ենթակայությամբ որպես վիրաբույժի օգնական: Անծայրածիր լոնդոնյան անապատում մի ծանոթ մարդ տեսնելը իսկապես շատ հաճելի բան է միայնակ մարդու համար:

Թեև հին օրերում Սթեմֆորդը իմ առանձնահատուկ մտերիմներից չէր, բայց անկեղծորեն ուրախացած ողջունեցի նրան, և նա էլ, ակնհայտորեն ուրախ էր ինձ տեսնելու համար: Ուրախությունից խանդավառված՝ հրավիրեցի նրան Հոլբորնում ինձ հետ ճաշելու, և մենք միասին ճանապարհ ընկանք մի հանսոմ երկանիվ կառքով[8]:

– Ինչո՞վ էիր զբաղված, Վոթսո՛ն, – հարցրեց նա անկեղծ զարմանքով, երբ մենք դղրդյունով անցնում էինք լոնդոնյան մարդաշատ փողոցներով: – Քանոնի պես նիհար ես ու ընկույզի պես թուխ:

Ես համառոտ նկարագրեցի նրան իմ արկածները և հազիվ էի ավարտել պատմությունս, երբ հասանք մեր նպատակակետին:

– Ա՛յ քեզ անբախտ սատանա, – ասաց նա կարեկցանքով՝ լսելով իմ դժբախտությունների մասին: – Հիմա ինչո՞վ ես զբաղված:

– Բնակարան եմ փնտրում, – պատասխանեցի: – Փորձում եմ հասկանալ, արդյոք հնարավոր է ողջամիտ գնով քիչ թե շատ հարմարավետ կացարան գտնել Լոնդոնում:

– Ի՜նչ հետաքրքիր է, – մտազբաղ նկատեց ուղեկիցս, – այսօր դու արդեն երկրորդ մարդն ես, որ ինձ հետ խոսում է դրա մասին:

– Իսկ առաջինը ո՞վ էր, – հարցրի ես:

– Մեկը, որ աշխատում է մեր հիվանդանոցի քիմիական լաբորատորիայում: Այսօր առավոտյան բողոքում էր, որ չի կարողանում մի մարդ գտնել, ով իր հետ կուզենա կիսել իր գտած հարմար սենյակների վարձը: Ասում էր, որ ամբողջ վարձն իր գրպանի համար չափազանց թանկ է:

– Աստված վկա՛, – բացականչեցի ես, – եթե նա իրոք ուզում է մեկին, որ իր հետ կկիսվի բնակարանի վարձով, ես հենց այն մեկն եմ, ով պետք է նրան: Ես նույնպես, անկասկած, կնախընտրեմ ընկերովի տուն վարձել, քան մենակ ապրել:

Երիտասարդ Սթեմֆորդը իր գինու բաժակի վրայից մի փոքր տարօրինակ հայացքով նայեց ինձ:

– Դու դեռ Շերլոկ Հոլմսին չես ճանաչում, – ասաց նա: – Հնարավոր է, որ ճանաչելուց հետո նրա հետ մշտական գործ ունենալու ցանկություն չունենաս:

– Ինչո՞ւ... Ի՞նչ ունես նրա դեմ, – հարցրի ես:

– Օ՛հ, չէի ասի, թե նրա դեմ ինչ-որ բան ունեմ: Անկեղծ ասած, այդ երիտասարդը մի քիչ տարօրինակ մարդ է: Չափազանց խրված է գիտության որոշ ճյուղերի ուսումնասիրության մեջ, կարելի է ասել, որ գիտության մոլի նվիրյալ է: Բայց որքան արդեն ճանաչում են նրան, ընդհանուր առմամբ, կարգին մարդ է:

– Ենթադրում եմ, որ բժշկական ուսանող է, – ասացի ես:

– Ո՛չ: Անկեղծ ասած, գաղափար անգամ չունեմ, թե ի՞նչ է սովորում: Եթե տեսածիցս դատեմ, անատոմիայից շատ լավ է հասկանում և առաջնակարգ քիմիկոս է, բայց որքան գիտեմ՝ երբեք բժշկության ոլորտի որևէ համակարգված դասընթաց չի

անցել: Նրա ուսումնասիրությունները շատ անկանոն են ու էքսցենտրիկ, սակայն այնպիսի հազվագյուտ գիտելիքներ ունի, որ անկասկած կապշեցնի ցանկացած դասախոսի:

– Ոչ մի անգամ չե՞ս հարցրել, թե ինչով է ուզում զբաղվել, – հարցրի ես:

– Ո՛չ: Նրան խոսեցնելն այնքան էլ հեշտ չէ, թեև, երբ տրամադրությունը տեղն է, բավականին շատախոս է դառնում:

– Կցանկանայի հանդիպել նրան, – ասացի ես: – Եթե պետք է որևէ մեկի հետ բնակվեմ, կնախընտրեի գիտությամբ զբաղվող ու հանգիստ սովորություններով մեկին: Ես դեռ այնքան ուժեղ չեմ, որ աղմուկի ու խառնաշփոթի դիմանամ: Աֆղանստանում դրանից այնքան եմ տեսել, որ մնացած ամբողջ կյանքիս համար կուշտ եմ: Ինչպե՞ս կարող եմ ծանոթանալ այդ քո ընկերոջ հետ:

– Գրեթե վստահ եմ, որ նրան լաբորատորիայում կգտնենք, – պատասխանեց զրուցակիցս: – Երբեմն շաբաթներով այնտեղ չի երևում, իսկ երբեմն առավոտից մինչև ուշ գիշեր այնտեղ է: Եթե ուզում ես, ճաշից հետո կարող ենք միասին գնալ այնտեղ:

– Անշուշտ, – պատասխանեցի ես, և մեր խոսակցությունը գնաց այլ ուղղությամբ:

Երբ Հոլբորնից դուրս գալով գնում էինք հիվանդանոց, Սթեմֆորդը ինձ մի քանի մանրամասներ պատմեց այն մարդու մասին, որի հետ պատրաստվում էի համատեղ բնակվել:

– Եթե հանկարծ իրար հետ լեզու չգտնեք, ինձ չմեղադրես, – ասաց նա: – Ես նրա մասին ավելին չգիտեմ, բացի այն ամենից, ինչ տեսել ու լսել եմ լաբորատորիայում նրան երբեմն հանդիպելուց:

Դու ինքդ առաջարկեցիր, որ քեզ ծանոթացնեմ նրա հետ: Տե՛ս, թե հետո մի բան պատահի, ես պատասխանատու չեմ:

– Եթե չկարողանանք համաձայնության գալ, ուղղակի կգնանք մեր ճանապարհներով, – պատասխանեցի ես: – Ինձ թվում է, Սթեմֆորդ, – ավելացրի ես՝ ուշադիր նայելով նրան, – որ դու ինչ-որ պատճառ ունես այս գործից ձեռքերդ լվանալու համար: Անկեղծ ասա՛: Ի՞նչն է քեզ մտահոգում այդ մարդու մեջ: Մի՞թե այդքան անտանելի բնավորություն ունի, թե՞ ուրիշ բան էլ կա: Եթե ինչ-որ բան գիտես նրա մասին, հիմա ասա՛:

– Գիտե՞ս, դժվար է արտահայտել մի բան, ինչն արտահայտելու ենթակա չի, – պատասխանեց նա՝ ծիծաղելով: – Հոլմսը իմ ճաշակով մի քիչ չափազանց գիտական է. նրա մոտ դա հասնում է գրեթե անմարդկային սառնարյունության մակարդակի: Օրինակ, ես միանգամայն կարող եմ պատկերացնել, թե նա ինչպես է մեկին մի պտղունց նորագույն բուսական ալկալոիդ հրամցում՝ ընդ որում, բնավ ո՛չ չարամտությունից... Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ուզում ասել... Նա դա կանի զուտ գիտական հետաքրքրասիրությունից... Որպեսզի հետո ճշգրիտ պատկերացում կազմի, թե այդ նյութն ինչպես կազդի նրա վրա: Բայց ի պատիվ նրան, պետք է անկեղծ ասեմ, որ ինքն էլ առանց երկար-բարակ մտածելու կընդունի այդ նույն ալկալոիդից: Մի բան հաստատ գիտեմ, որ այդ մարդը հիվանդագին սեր ունի ճշգրիտ ու ապացուցված գիտելիքների նկատմամբ:

– Դե, դա այնքան էլ վատ բան չէ, – առարկեցի ես:

– Այո, բայց նրա մոտ դա երբեմն ծայրահեղության է հասնում: Չգիտեմ ինչպես ասեմ... Պատկերացրո՛ւ... Երբ խոսքը

գնում է... դիահերձարանում մեռելներին մահակով թակելու մասին... Դա արդեն բավականին տարօրինակ բան է, չե՞ս կարծում:

— Մեռելներին մահակով թակելո՞ւ...

— Հա՛, որպեսզի պարզի, թե մահից հետո մարմնի վրա ոնց են կապտուկներ առաջանում: Սեփական աչքերովս եմ տեսել:

— Եվ դու դեռ ասում ես, որ նա բժշկական ուսանող չէ՞:

— Ո՛չ: Աստված գիտի, թե իրականում ինչ է ուսումնասիրում: Բայց արդեն հասանք, և հիմա դու ինքդ պատկերացում կկազմես նրա մասին:

Խոսելով՝ մտանք մի նեղ նրբանցք, անցանք մի փոքր կողմնատար դռնով, որը բացվում էր մի մեծ հիվանդանոցի թևային շինության մեջ: Միջավայրն ինձ լրիվ ծանոթ էր, և առաջնորդողի կարիք չունեի, երբ բարձրանում էինք քարե մռայլ աստիճաններով ու քայլում սպիտակեցված դատարկ պատերով ու միմյանց հաջորդող մուգ դարչնագույն դռներով երկար միջանցքով: Վերջին հատվածում մի ցածր, կամարակապ անցուղի ճյուղավորվում էր դեպի քիմիական լաբորատորիան:

Սա բարձր առաստաղով մեծ սրահ էր՝ ամեն ինչի վրա շարվեշար ու խառնաշփոթ դրված անհամար շշերով: Ամբողջ տարածքը ծածկված էր լայն ու ցածր սեղաններով, որոնք ծանրաբեռնված էին թորանոթներով, փորձանոթներով և ալկահոլով այրվող փոքրիկ բունզենյան լամպերով[9], որոնք այրվում են կապտավուն թրթռացող բոցերով: Սենյակում միայն մեկ ուսանող կար, որը խորքում սեղաններից մեկի մոտ թեքված՝ ամբողջովին կլանված էր իր աշխատանքի մեջ: Մեր քայլերի

ձայնը լսելով՝ նա շրջվեց և ուրախ ճիչ արձակելով տեղում վեր ցատկեց:

– Գտե՛լ եմ... Գտե՛լ եմ, – գոչեց նա, և ձեռքին մի փորձանոթ բռնած վազեց մեզ ընդառաջ: – Գտել եմ այն ռեագենտը, որը նստվածք է տալիս միայն հեմոգլոբինի ազդեցությունից և ուրիշ ոչ մի նյութից:

Այնպիսի տպավորություն էր, ասես ոսկու հանք էր հայտնաբերել: Դժվար թե ավելի մեծ հրճվանքով ասեր այդ մասին:

– Դոկտոր Վոթսոն... պարոն Շերլոկ Հոլմս, – ասաց Սթեմֆորդը՝ ծանոթացնելով մեզ:

– Ուրախ եմ, – ասաց նա ջերմորեն՝ սեղմելով ձեռքս այնպիսի ուժով, որը ես նրանից չէի սպասում: – Աֆղանստանում եք եղել, ենթադրում եմ:

– Այդ ո՞նց իմացաք, – զարմացած հարցրի ես:

– Կարևոր չէ, – ասաց նա՝ քթի տակ քմծիծաղելով: – Կարևորը հիմա հեմոգլոբինն է: Անշուշտ հասկանում եք իմ այս հայտնագործության կարևորությունը:

– Անկասկած... Քիմիական տեսանկյունից, իրոք, հետաքրքիր է, – պատասխանեցի ես, – բայց գործնական առումով...

– Այ քեզ բա՛ն, ուրեմն իրոք չտպավորվեցի՞ք... Ախր սա անցած տարիների ընթացքում կատարված ամենագործնական դատաբժշկական հայտնագործությունն է: Մի՞թե չեք հասկանում, որ սա արյան հետքերի անսխալական փորձարկման հնարավորություն է տալիս: Այստեղ եկե՛ք... – Իր ոգևորության մեջ ասես ոչինչ չնկատելով, նա բռնեց բաճկոնիս թևքից ու քաշ տվեց ինձ դեպի այն սեղանը, որի վրա աշխատում էր: – Հիմա եկեք

մի քիչ թարմ արյուն վերցնենք… – ասաց նա՝ մի երկար հաստ ասեղով ծակելով իր մատը և քիմիական կաթոցիչով մի կաթիլ արյուն վերցրեց մատից: – Նայե՛ք, հիմա ես մի քանի կաթիլ արյուն կլցնեմ մեկ լիտր ջրի մեջ: Տեսնում եք, չէ՞… Ստացված խառնուրդը սովորական ջրից ոչնչով չի տարբերվում: Արյան բաժինը այս ջրի մեջ մեկ միլիոնից ավելի քիչ մաս է կազմում: Սակայն ես կասկած չունեմ, որ մենք կստանանք բնորոշ ռեակցիան:

Խոսելիս նա անոթի մեջ գցեց մի քանի հատիկ սպիտակ բյուրեղներ, ապա մի քանի կաթիլ թափանցիկ հեղուկ ավելացրեց: Մեկ ակնթարթում անոթի պարունակությունը դարձավ մուգ բոսորագույն, իսկ ապակե անոթի հատակին փոշենման դարչնագույն նստվածք հայտնվեց:

– Հա-հա՛, – բացականչեց նա՝ ծափ տալով՝ մի նոր խաղալիք ստացած երեխայի պես հրճված: – Իսկ սրա մասին ի՞նչ կասեք:

– Իրոք կարծես շատ հետաքրքիր փորձարկում էր, – նկատեցի ես:

– Հիասքա՜նչ էր, հիասքա՜նչ… Գվայակում թեստի[10] հին մեթոդը շատ անհարմար է ու անորոշ: Նույնը կարելի է ասել արյան մասնիկների միկրոսկոպիկ հետազոտության մասին: Վերջինս լրիվ անօգուտ է դառնում, եթե բծերը մի քանի ժամից հին են: Իսկ սա, կարծես, հավասարապես գործում է թե՛ հին, թե՛ նոր արյան դեպքում: Եթե այս թեստը մենք առաջ ունենայինք, չկասկածե՛ք անգամ, որ երկրի վրա ազատության մեջ քայլող հարյուրավոր մարդիկ արդեն վաղուց կալանավորված կլինեին իրենց կատարած հանցանքների համար:

– Իսկապե՞ս, – ապշահար մրմնջացի ես:

– Քրեական գործերը շարունակ կախվում են՝ հասնելով հենց այդ մեխին: Երբեմն մարդուն սկսում են կասկածել որևէ հանցագործության մեջ, բայց դեպքից արդեն ամիսներ անց: Ստուգում են նրա սպիտակեղենը կամ հագուստը և շագանակագույն բծեր են հայտնաբերում դրանց վրա: Բայց թե արդյո՞ք դրանք արյան բծեր են, թե՝ ցեխի, ժանգի, մրգահյութի, կամ ո՞վ իմանա ինչի: Այդ հարցը տարիներ շարունակ մոլորեցրել է բազմաթիվ մասնագետների: Եվ ինչո՞ւ: Որովհետև հուսալի փորձարկման մեթոդ գոյություն չուներ: Իսկ հիմա կունենանք *Շերլոկ Հոլմսի մեթոդը*, և այլևս ոչ մի բարդություն չի լինի:

Խոսելիս նրա աչքերը փայլում էին, և նա ձեռքը դնելով սրտին խոնարհվեց դեպի դատարկ սրահը՝ այնպես, ասես երևակայության մեջ խոնարհվում էր իրեն ծափահարող բազմությանը:

– Ձեզ կարելի է շնորհավորել, – նկատեցի ես՝ բավականին զարմացած նրա ոգևորությունից:

– Անցած տարի Ֆրանկֆուրտում մեծ աղմուկ բարձրացրեց Վոն Բիշոֆի գործը[11]: Եթե այս փորձարկումը այն ժամանակ գոյություն ունենար, նա անպայման կախաղան կբարձրանար: Իսկ հետո... Բրեդֆորդի Մեյսոնը, տխրահռչակ Մյուլլերը, Մոնպելյեի Լեֆևրը, և Նոր Օռլեանի Սամսոնը[12]... Կարող եմ տասնյակ դեպքեր թվարկել, որտեղ սա վճռական հետևանք կունենար:

– Դուք կարծես հանցագործությունների կենդանի հանրագիտարան լինեք, – ծիծաղելով ասաց Սթեմֆորդը: –

Կարող եք նույնիսկ այդ թեմայով պարբերական սկսել: Անունը կդնեք «Անցյալի ոստիկանական լուրերից»:

– Ասեմ, որ շատ հետաքրքիր ընթերցանություն կստացվեր, – նկատեց Շերլոկ Հոլմսը՝ մատի ծակած տեղին փոքրիկ սպեղանի կպցնելով: – Պետք է զգույշ լինեմ, – շարունակեց նա՝ ժպտալով ինձ, – որովհետև բավականին հաճախ գործ ունեմ թույների հետ:

Նա ձեռքը մեկնեց, և ես նկատեցի, որ ձեռքի վրա բազմաթիվ նմանատեսակ սպեղանիներ կային, և մաշկը գունազրկված էր ուժեղ թթուներից:

– Մենք այստեղ գործով ենք եկել, – ասաց Սթեմֆորդը՝ նստելով բարձր եռոտանի աթոռակի վրա և ոտքով մեկ ուրիշը հրելով դեպի ինձ: – Ընկերս բնակարան է փնտրում, և քանի որ դուք բողոքում էիք, որ մարդ չեք գտնում, ով ձեզ հետ կկիսի բնակարանի վարձը, մտածեցի, որ կարող եմ ծանոթացնել ձեզ:

Շերլոկ Հոլմսն ակնհայտորեն ուրախացավ ինձ հետ բնակարանի վարձը կիսելու գաղափարից:

– Աչքս կպել է Բեյքեր փողոցում մի բնակարանի, – ասաց նա, – որը մեզ կատարելապես կհամապատասխանի: Հուսով եմ՝ ծխախոտի ուժեղ հոտը ձեզ չի՞ խանգարի:

– Ես ինքս էլ ուժեղ ու էժան ծխախոտ եմ ծխում, – պատասխանեցի ես:

– Ուրեմն խնդիր չկա: Սովորաբար տանը քիմիական նյութեր եմ պահում և երբեմն փորձեր եմ անում: Դրանից հո չե՞ք նեղվի:

– Ամենևին:

– Հիմա տեսնենք՝ էլ ինչ թերություններ ունեմ: Երբեմն ընկճվում եմ ու օրերով ոչ մեկի հետ չեմ խոսում: Այդ ժամանակ

չմտածեք, թե նեղացել եմ ձեզնից: Պարզապես հանգիստ թողեք ինձ, և շուտով կկարգավորվեմ: Իսկ դուք ի՞նչ ունեք խոստովանելու: Ավելի լավ է մարդիկ միմյանց վատ կողմերը նախօրոք իմանան, նախքան միասին ապրելը:

Ես ծիծաղեցի այդ հարցաքննության վրա:

– Ես բուլդոգի ձագ ունեմ, – ասացի, – չեմ սիրում աղմուկը, որովհետև նյարդերս խանգարված են, արթնանում եմ Աստված գիտի որ ժամին և ծայրահեղ ծույլ եմ: Մի շարք այլ թերություններ էլ ունեմ, բայց այս պահին սրանք են հիմնականը:

– Իսկ ջութակի ձայնը մտնո՞ւմ է աղմուկի ձեր սահմանման մեջ, – անհանգստացած հարցրեց նա:

– Դա կախված է նվագողից, – պատասխանեցի ես: – Լավ նվագված ջութակը աստվածային վայլեք է, իսկ վատ նվագվածը...

– Օ՛հ, այդ դեպքում ամեն ինչ կարգին է, – ուրախ ծիծաղով ասաց նա: – Կարծում եմ՝ հարցը կարելի է լուծված համարել, եթե սենյակները ձեզ դուր գան, իհարկե:

– Ե՞րբ կարող ենք տեսնել դրանք:

– Վաղը կեսօրին եկեք այստեղ: Միասին կգնանք ու ամեն ինչի մասին կպայմանավորվենք, – պատասխանեց նա:

– Լավ, ուրեմն վաղը ուղիղ կեսօրին, – ասացի ես՝ սեղմելով նրա ձեռքը:

Մենք նրան թողեցինք քիմիական նյութերի հետ աշխատելիս և միասին քայլեցինք դեպի իմ հյուրանոցը:

– Ի դեպ, – հանկարծ հարցրի ես՝ կանգ առնելով ու շրջվելով դեպի Սթեմֆորդը, – նա ի՞նչ սատանի հնարքով իմացավ, որ ես Աֆղանստանից եմ եկել:

Ուղեկիցս խորհրդավոր ժպտաց:

– Դա նրա փոքրիկ առանձնահատկություններից մեկն է, – ասաց նա: – Շատերը կուզենային հասկանալ, թե ինչպես է կարողանում այդպես տարբեր բաներ իմանալ:

– Օ՛, այսինքն՝ գաղտնիք է, հա՞, – բացականչեցի ես՝ ձեռքերս շփելով: – Շատ հետաքրքիր է: Շնորհակալ եմ, որ ծանոթացրիր մեզ: Ինչպես ասում են. «Մարդուն ճանաչելու համար ուսումնասիրության լավագույն առարկան մարդն է»:

– Այդ դեպքում ուսումնասիրի՛ որքան ուզում ես, – ասաց Սթեմֆորդը՝ հրաժեշտ տալով ինձ: – Բայց նա բավականին բարդ հանելուկ է: Գրազ եմ գալիս՝ նա քեզ շուտով ավելի լավ կճանաչի, քան դու նրան: Ցտեսությո՛ւն:

– Ցտեսությո՛ւն, – պատասխանեցի ես ու վերադարձա հյուրանոց՝ խորապես հետաքրքրված իմ նոր ծանոթով:

Գլուխ 2. Դեդուկցիայի գիտությունը

Հաջորդ օրը հանդիպեցինք՝ ինչպես պայմանավորվել էինք, և այցելեցինք Բեյքեր Սթրիթ «221/Բ» հասցեում գտնվող բնակարանը, որի մասին խոսել էինք մեր առաջին հանդիպման ժամանակ: Այն բաղկացած էր երկու հարմարավետ ննջասենյակներից և մեկ մեծ, բարձր առաստաղով հյուրասենյակից, որը կահավորված էր զվարթ ոճով և լուսավորվում էր երկու լայն պատուհաններով:

Բնակարանը բոլոր առումներով այնքան հրապուրիչ էր, իսկ վարձը, երբ կիսվում էր մեր միջև, այնքան չափավոր, որ մենք առանց հապաղելու տեղում պայմանավորվեցինք և անմիջապես դարձանք այդ բնակարանի կենվորները: Նույն երեկոյան ես հյուրանոցից տեղափոխեցի իմ իրերը, իսկ հաջորդ առավոտյան Շերլոկ Հոլմսը եկավ մի քանի արկղներով ու ճամպրուկներով: Մի քանի օր զբաղված էինք իրերը բացելով ու տեղավորելով: Հետո սկսեցինք աստիճանաբար ընտելանալ մեր նոր բնակարանին:

Հոլմսը, անկասկած, դժվար մարդ չէր համատեղ ապրելու համար: Նա հանգիստ բնավորություն ուներ և կանոնավոր սովորություններ: Գիշերվա տասից հետո հազվադեպ էր արթուն լինում, իսկ առավոտյան միշտ նախաճաշում և դուրս էր գալիս տնից մինչև ես կարթնանայի: Երբեմն ամբողջ օրը մնում էր քիմիական լաբորատորիայում, երբեմն՝ դիահերձարաններում, իսկ երբեմն էլ երկար զբոսանքների էր գնում, որոնք, նրան միշտ տանում էին դեպի քաղաքի ամենաաղքատ թաղամասերը: Ոչինչ չէր կարող մրցել նրա եռանդի հետ, երբ կլանվում էր

աշխատանքային տենդով, սակայն երբեմն բուռն եռանդը լքում էր նրան, և նա օրերով պառկում էր հյուրասենյակի բազմոցին ու առավոտից երեկո հազիվ թե մի բառ լսվեր նրա բերանից, կամ անգամ մի մկան շարժվեր՝ դեմքին: Այդ ժամանակ նրա աչքերում այնպիսի ցրված ու դատարկ արտահայտություն էր երևում, որ կարող էի ենթադրել անգամ, թե նա ինչ-որ թմրանյութի ազդեցության տակ էր, եթե միայն նրա կենսաոճի զսպվածությունն ու անձնական մաքրասիրությունը հակառակի մասին չվկայեին:

Շաբաթներն անցնում էին, և իմ հետաքրքրասիրությունը նրա անձի ու կյանքի նպատակի նկատմամբ հետզհետե խորանում էր: Նրա արտաքին կերպարանքը կարող էր գրավել նույնիսկ ամենաանտարբեր դիտորդի ուշադրությունը: Նա վեց ֆուտից[13] քիչ ավելի բարձր հասակ ուներ և այնքան արտասովոր նիհար էր, որ դրանից շատ ավելի բարձրահասակ էր երևում: Աչքերն ուշադիր էին ու խորաթափանց, բացառությամբ այն անդորրի պահերի, որոնց մասին արդեն պատմեցի: Բարակ ուրվագծով, բազեի կտուցի նման քիթը մշտական զգոնության և վճռականության արտահայտություն էր հաղորդում դեմքին: Կզակն այնպիսի արտահայտված քառակուսի ուրվագիծ ուներ, որը բնորոշ է հաստատակամ մարդկանց: Ձեռքերը միշտ ծածկված էին թանաքի բծերով ու քիմիական նյութերից այրված հետքերով, թեև մատները զարմանալիորեն նրբաշարժ էին, ինչը հաճախ էի նկատում, երբ հետևում էի, թե ինչպես էր նա հմտալից աշխատում իր նուրբ գիտական գործիքներով:

Ընթերցողը կարող է ինձ անհարիր հետաքրքրասեր համարել, եթե խոստովանեմ, թե որքան էր այս մարդը բորբոքում